Յուրի ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

1976 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ: 1987 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան, 1990 թ.՝ դոցենտի կոչում: 2019 թ. օգոստոսին նշանակվել է «Փիլիսոփայության և հայոց պատմության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 30 գիտական հոդվածների:

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հիմնաբառեր. *թագավարակ, համավարակ, համաճարակ, ազգային առանձնահատկություններ, հոգևոր-բարոյական, բնածին և մարդածին աղետ, «սև մահ», «իսպանական գրիպ», վարակակիր*

Հոդվածը նվիրված է կորոնավիրուսի համավարակի դրսևորման առանձնահատկություններին: Հեղինակն այն կարծիքին է, որ թեև համավարակները չունեն ազգային բնույթ, քանի դեռ գիտությունը չի բացահայտել մարդկային գենի ազգային կամ ռասայական հիմքերը, այնուամենայնիվ, դրանց դեմ պայքարում միանգամայն կարևոր է ազգային հոգևոր-բարոյական առանձնահատկությունների դերը: Այդ մասին է վկայում նաև Չինաստանի օրինակը, և ամենևին պատահական չէ, որ ժամանակակից արևմտյան ժողովրդավարական երկրները, որոնք Չինաստանին քննադատում էին տոտալիտարիզմի (ամբողջատիրության) մեջ, այսօր իրենք են հետևում վերջինիս որդեգրած՝ համավարակի դեմ պայքարի մեթոդներին: Հեղինակի համոզմամբ՝ թեև հայ ժողովրդի մտածողությունը ձևավորվել է ըստ արևմտյան ավանդույթների, անհատապաշտության, ազատականության և ժողովրդավարության սկզբունքների, և, որպես եսապաշտ, նա անկարգ է և անիշխանական թե՛ հասարակության, թե՛ պետության և թե՛ գաղափարների մեջ, այնուամենայնիվ, անհրաժեշտության պահին նա ընդունակ է համախմբվելու, ազգային ու պետական շահը բարձրագույն նպատակ դարձնելու, պետության և իշխանությունների կողքին կանգնելու՝ անկախ նրանց հանդեպ ունեցած իր վերաբերմունքից և, այս դեպքում, իր կարգապահությամբ համավարակը հաղթահարելու…

Մարդկության պատմությունը ոչ միայն տնտեսական ու սոցիալական առաջընթացի

պատմություն է, ինչպես ներկայացվում է դասագրքերում, այլև բնական աղետների, կատակլիզմների (հեղակործանման), տարաբնույթ՝ տարբեր ծագում ու ընդգրկում ունեցող համաճարակների (սև օսպա, ժանտախտ, խոլերա, գրիպ, որովայնային տիֆ, դիզինտերիա, և այլն), մեծ և փոքր, ազգամիջյան և համաշխարհային պատերազմների: Ավելին, պատմաբանները նույնիսկ պնդում են, որ, օրինակ, պատերազմական տարիները մարդկության պատմության մեջ եղել են ավելի շատ, քան խաղաղությանը: Չգիտեմ՝ նման հաշվարկ կատարվե՞լ է, արդյոք, համաճարակների հետ կապված, թե՞ ոչ, հետևաբար՝ չգիտեմ նաև, թե մարդկությունն ավելի շատ ապնց դեմ պայքարելով, «լինել-չլինելու» սարսափն իր մեջ…, սակայն, համոզված եմ, որ համաճարակների հետևանքով մարդկային զոհերի թիվը մի քանի անգամ գերազանցում է պատերազմների զոհերի թիվը:

Պատմության մեջ հիշատակվում են մի քանի համաճարակներ, որոնք իրենց տարածական ընդգրկմամբ չեն զիջում «թագավարակ» անունով հայտնի այսօրվա համաճարակին, իսկ ժամանակային տևողության առումով, հաստատ, գերազանցել են նրան, թեև վերջինիս «ծայրը» դեռևս չի երևում: Նման համավարակներից առաջինը, որի մասին ուզում եմ խոսել, բռնկվել է բյուզանդական կայսր Հուստինիանոս I-ի իշխանության տարիներին, VI դարի երկրորդ քառորդին՝ եգիպտական Պելուսա քաղաքում և Պաղեստինի ու Հայաստանի վրայով անցել Բյուզանդիա: Բնական է, որ այս համավարակը չէր կարող շրջանցել Հայաստանը, որը գտնվում էր համավարակի ճանապարհին և Բյուզանդիայի տիրապետության տակ, սակայն այդ մասին որևէ հիշատակություն չկա: Այդ մասին լռում է նաև բյուզանդական նշանավոր պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին, որը եղել է հույն նշանավոր զորավար Բելիսարիոսի քարտուղարը և, մասնակցելով պարսիկների դեմ մղված պատերազմներին, արժեքավոր տեղեկություններ հաղորդել բյուզանդական Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակի մասին: Այդ մասին չի խոսում նաև Ն. Ադոնցն իր դասական դարձած՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»[1] աշխատության մեջ, այն դեպքում, երբ Պրոկոպիոս Կեսարացին հանգամանորեն նկարագրում է Կ. Պոլսում ժանտախտի կատարած ավերը: Նրա վկայությամբ, Կ. Պոլսում օրական մահանում էր 5000-10000 մարդ: «Ժանտախտից մարդը փրկություն չուներ, որտեղ էլ որ ապրեր, ո՛չ կղզու վրա, ո՛չ քարանձավում, ո՛չ էլ լեռան գագաթին… Բազմաթիվ տներ դատարկվեցին, և պատահում էր, որ բազմաթիվ մահացողներ հարազատներ և սպասավորներ չունենալու պատճառով, մի քանի օր մնում էին չայրված: Այդ ժամանակ դժվար էր որևէ մեկին աշխատել պարտադրելը: Մարդկանց մեծ մասը, որոնց կարելի էր հանդիպել փողոցում, դիակ տանողներն էին: Առևտուրն ամբողջությամբ կանգ էր առել, արհեստավորները լքել էին իրենց արհեստները…»[2]: Այս համավարակը տևեց մոտ 50 տարի և ծանր հետևանքներ ունեցավ Բյուզանդիայի համար, որը կորցրեց իր բնակչության գրեթե կեսը և այլևս չկարողացավ ոտքի կանգնել՝ ճանապարհ բացելով մահմեդականության հետագա հաղթարշավի համար:

Իհարկե, ժանտախտի մասին առաջին հիշատակություններն ավելի հին են: Միջագետքի մշակույթի լավագիտակ մեկնաբաններից Վ. Զամարովսկին շումերական Էպոսի մեկնաբանության մեջ գրում է, որ Գիլգամեշն Ութուկում մահվան բազմաթիվ դեպքերի ականատես է լինում: Քաղաքում հայտնվել էր ժանտախտի աստված Էրրը, որից ոչ մի փրկություն չկար: Դիակները թափված էին տներում, ըն-

[1] Ն.Շ. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, ռուս. թարգմ.՝ Ա.Թ. Խոնդակարյան, Է.Հ. Խոնդակարյան, Ե., 1987:

[2] Даниэл М., Тайные тропы носителей смерти. Пер. с чеш./Под ред. Б. Л. Черкасского. М.: Прогресс, 1990. 416 с., http://www.sivatherium.narod.ru/library/Daniel/glava_02.htm

դարձակ փողոցներում և հրապարակներում, Եփրատի ջրերի մեջ: Այդ սարսափելի տեսարանները տեսնելով՝ Գիլգամեշը դիմում է Շամաշ-Արև աստծուն. «Ոչինչ չես կարող անել, Գիլգամե՛շ,- պատասխանում է Շամաշը: -Դու հերոս ես և տիրակալ: Բայց մարդու օրերը հաշված են: Նույնիսկ թագավորը մի օր մեռնելու է և այլևս չի լինելու»[3]: Ժանտախտի մասին խոսվում է նաև Հին Կտակարանի «Թագավորաց Առաջին գրքում», որպես փղշատցիներին հասած Աստծո պատուհաս՝ «Տիրոջ տապանակը» (հայտնի է նաև «Ուխտի տապանակ» անունով, հրեա ժողովրդի մեծագույն սրբություն, որի մեջ, ըստ Աստվածաշնչի, պահվում էին Տասը պատվիրանների Օրենքների Տախտակները, երկնային մանանայով լի անոթը, և Ահարոնի գավազանը) առևանգելու համար (Ա Թագաւորաց, Գլ. Ե, Գլ. Զ):

Համաճարակի շումերական և աստվածաշնչյան պատումներն ունեն տեղային բնույթ, որը հիմնականում բացատրվում է հնագույն ժողովուրդների կյանքի ներփակությամբ, երկրների և ժողովուրդների միջև տնտեսական և մշակութային կապի չգոյությամբ, և այս տեսանկյունից, գուցե և համավարակ չեն: Սակայն, այս պատումներում առկա է մի շեշտադրում, որը շատ կարևոր է. երկու դեպքում էլ համաճարակն ուղղորդվում է աստվածների կողմից, մի դեպքում՝ շումերական Էրր աստծո՝ որպես պատիժ աստվածների ուղեգծած ճանապարհից շեղվելու համար, իսկ մյուս դեպքում՝ հրեական աստծո, որը պատժում էր փղշատցիներին՝ հրեաներին պատերազմում հաղթելու և գերեվարելու համար…

Ժանտախտի երկրորդ համավարակը, որն ավելի հայտնի է «սև մահ» անունով, 1050-ական թվականներին բռնկվեց Միջագետքում, հետագայում՝ XIV դարի առաջին կեսին այն ընդգրկեց Չինաստանից մինչև Արևմտյան Եվրոպա ընկած տարածությունները, խլելով 75 միլիոն մարդու կյանք, այդ թվում՝ 25 միլիոն միայն Եվրոպայում: «Սա փոխեց աշխարհի ժողովրդագրական պատկերը»,- գրում է Մ. Դանիելը[4]: Այս համավարակը գրավեց ուշադրությունս նրանով, որ բավական մեծ նմանություն գտա մեր օրերում լայն տարածում ստացող թագավարակի (կորոնավիրուսի) հետ՝ համատարած պատերազմներ, քաղաքացիական բախումներ՝ գրեթե բոլոր երկրներում, հաճախ միանգամայն արյունահեղ, բնական համաղետներ (կատակլիզմներ), միգրացիա և համավարակի լայն ընդգրկում: Ժանտախտից ապահովագրված չէր ոչ ոք: Մահացածների մեջ էին Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Սրբազանը (Լյուդովիկոս IX), Գերմանիայի կայսր Գյունտերը, Ալֆոնսո XI Արդարացին, նկարիչ Տիցիանը և ուրիշներ: Բժշկությունն անզոր էր, և այդ համավարակի դեմ կար մեկ բուժում՝ արտահայտված երեք բառով՝ «cito, longe, tarde», որը բառացիորեն թարգմանվում է հետևյալ կերպ. «Ինչքան հնարավոր է՝ հեռու՛ փախիր վարակված տեղանքից և ինչքան հնարավոր է՝ ու՛շ վերադարձիր»[5]:

Ուշագրավն այն է, որ այս համավարակի համար մեղադրում էին հրեաներին: Ենթադրում էին, որ վերջիններս այս հիվանդությամբ փորձում են ոչնչացնել քրիստոնյաներին: Նման ենթադրության համար հիմք էր տալիս այն, որ հրաները, լինելով համեմատաբար ավելի զարգացած և ներփակ կյանքով ապրողներ, հետևում էին իրենց հիգիենային և քիչ զոհեր տվեցին: Առաջին մեղադրանքն ու հարձակումը հրեաների վրա տեղի ունեցավ 1348 թվականին, ֆրանսիական Թուլուզ քաղաքում, որոշ ժամանակ անց, նույն մեղադրանքով, հրեաների վրա հարձակվեցին Բարսելոնում, Բազելում, Մյունխենում, Ֆրայբուրգում: Հրեաներին վտարում էին քա-

[3] Даниэл М., Тайные тропы носителей смерти: Пер. с чеш./Под ред. Б. Л. Черкасского. М.: Прогресс, 1990. 416 с., http://www.sivatherium.narod.ru/library/Daniel/glava_02.htm

[4] Նույն տեղում:

[5] Для чего средневековому чумному доктору были нужны маска, плащ и птичий клюв, https://medportal.ru/budzdorova/winner/vrach-vo-vremya-chumy/

ղաքներից, տանջում, և նրանք հարկադրված խոստովանում էին, որ թունավորել են ջրհորներն ու ջրամբարները[6]:

Նմանատիպ մի համավարակ Եվրոպան ապրեց նաև 1918–1920 թվականներին: Դա մարդկության պատմության մեջ ամենազանգվածային գրիպի համավարակն էր՝ ինչպես վարակվածների քանակով, այնպես էլ մահացության թվով: Տասնութ ամիսների ընթացքում այդ գրիպով վարակվեց գրեթե 550 միլիոն մարդ, որը երկրի բնակչության մոտ 29,5%-ն էր, որից, տարբեր հաշվարկներով, մահացել է 50–100 միլիոնը: Համաճարակը սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմի վերջին ամիսներին և արագորեն գերազանցեց պատերազմի զոհերի ընդհանուր թիվը: Այն հետագայում ստացավ «իսպանական գրիպ» անվանումը, որը Իսպանիայի հետ կապված էր այնքանով, որ, ի տարբերություն պատերազմող երկրների, որոնք, խուսափելով ռազմաճակատում խուճապային տարամադրություն ստեղծելուց, թաքցընում էին զոհերի իրական թիվը, մինչդեռ Իսպանիան, որպես չեզոք երկիր, առաջինն արձագանքեց համաճարակին…

Այդ համավարակներն ունեն ոչ միայն որոշակի ընդհանրություններ, այլև ընդգծված տարբերություններ այսօր աշխարհն ասպատակող «թագավարակ» կամ «COVID-19» անունով հայտնի համավարակից: Նախորդները երկրից երկիր տեղափոխվում էին առևտրական քարավանի կամ ձիու արագությամբ, որով և պայմանավորված էր այն, որ 1050-ականներին Միջագետքում և 1100–1200 թվականներին՝ Հնդկաստանում և Չինաստանում բռնկված համավարակը Եվրոպա տեղափոխվեց միայն 1330-ական թվականներին: Այսօր համավարակը տարածվում է ինքնաթիռի արագությամբ, և պատահական չէ, որ Չինաստանում բռնկված համավարակը մեկ-երկու ամսում ընդգրկեց ամբողջ աշխարհը: Թեև նախորդ համավարակներն ավելի շատ մարդկային կյանքեր խլեցին բժշկության, դեղամիջոցների, հիգիենայի, պրոֆիլակտիկ բժշկության բացակայության և այլ պատճառներով, այնուամենայնիվ, այսօրվա համավարակն ավելի սարսափելի է իր ընդգրկվածությամբ, թեև, համոզված եմ, որ ժամանակակից գիտությունը, հասարակության կազմակերպվածությունն ու յուրաքանչյուր անհատի գիտակից մոտեցումը երևույթին արագ լուծում են ենթադրում… Նման լավատեսության համար հիմք է տալիս Չինաստանը, որը կարողացավ ամենակարճ ժամանակահատվածում, թույլ տվեք ասել՝ նաև «նվազագույն կորուստներով», հաղթահարել ճգնաժամը: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ Չինաստանում արդեն բուժվել է համավարակով վարակվածների 93 տոկոսը…

Ուշագրավն այն է, որ գիտության և տեխնիկայի առաջընթացի ժամանակակից պայմաններում, այնուամենայնիվ, համավարակը մարդկությանը «բռնեց» անպատրաստ: Դրանով է պայմանավորված այն, որ ժամանակակից գերտերություններում՝ ԱՄՆ-ում, Չինաստանում, Եվրամիության երկրներում համավարակի զոհերի թիվն այդքան մեծ է: Բնական է, համավարակը հաղթահարվելու է, հուսով եմ՝ հաղթահարվելու է «ոչ թե ուշ, այլ շուտ», ինչպես հայտարարել է ԱՄՆ նախագահ Դ. Թրամփը, վերականգնվելու են տնտեսությունը, հաղորդակցությունը, ուշ կամ շուտ վերականգնվելու է նաև ազգաբնակչությունը, աշխատելու են հաստատություններն ու ձեռնարկությունները, դպրոցներն ու համալսարանները, ազգային փոխարժեքը գրավելու է իր տեղը, աշխուժանալու է կյանքը, վերստին բազմամարդ են լինելու համերգասրահներն ու մարզադաշտերը… Միաժամանակ, վերսկսվելու են հակամարտությունները, ինչի մասին է վկայում նաև Սպիտակ տան վերջին հայտարարություններից մեկը՝ համաձայն որի Չինաստանը մնում է իրենց ռազմավարական հիմնական հակառակորդը, հետևաբար՝ մոռացվելու են փոխօգնության և կարեկցանքի արտահայ-

[6] Чума: как "черная смерть" истребила сотни миллионов людей, https://24tv.ua/health/ru/chuma_kak_chernaja_smert_istrebila_sotni_millionov_ljudej_n1252393

տությունները, քանի որ, Սպիտակ տան բնորոշմամբ՝ իրենք ավելի մտահոգ են Ամերիկայի փառքով, քան մարդկության ճակատագրով[7]: Ուստի այն որոշումները, որ ընդունելու են կառավարությունները և մարդիկ մոտակա շաբաթներին, ամենայն հավանականությամբ, ազդելու են աշխարհի հետագա ընթացքի վրա: Այդ որոշումներն ազդելու են ոչ միայն տնտեսության, քաղաքականության, կրթական համակարգի, առողջապահության, այլև մշակույթի և մարդկային փոխհարաբերությունների վրա:

Իսկ ի՞նչ է լինելու մարդու հետ, ինչպե՞ս է նա հաղթահարելու այն ապրումները, տագնապները, վախերն ու սպառնալիքները, որ ապրել է և ապրելու է, և կկարողանա՞, արդյոք, հաղթահարել այդ ամենը՝ առանց հոգևոր-բարոյական լուրջ կորուստների… Սա մեծ հարց է, և այդ մասին հարկավոր է մտածել հենց այսօր՝ յուրաքանչյուր որոշում ընդունելիս, այդ որոշումները ստորագրելիս, առավել ևս՝ դրանք կիրառելիս, որովհետև այդ Որոշումները նույնպես կարող են խորացնել ապրումները… Որպես կանոն, բոլոր Որոշումները լինում են Պահի թելադրանքով, հաշվի առնելով միայն Առաջնային հետևանքները, մինչդեռ, ինչպես ցույց են տալիս կյանքը և փորձը, շատ անգամ Երկրորդական, նույնիսկ Երրորդական համարվող հետևանքները կարող են հետագայում ավելի մեծ կարևորություն ունենալ, քան այն, որը ժամանակին ընդունվել էր որպես Առաջնային…

Նույնիսկ մինչև այսօր ժողովրդավարական և ազատական համարվող երկրների կողմից չեն դադարում քննադատությունները Չինաստանում մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանափակող որոշ օրենքների կիրառման վերաբերյալ, որոնք Չինաստանում համարվում են ավանդական, քանի որ գալիս են դեռևս Կոնֆուցիոսից և Օրենսդիրներից (Լեյկիստներ)… Հետևելով մարդկանց սմարթֆոններին, օգտագործելով միլիոնավոր տեսախցիկներ, որոնք ճանաչում են մարդկանց դեմքերը և ստիպում նրանց ստուգել ու տեղեկություններ հաղորդել իրենց մարմնի ջերմության և առողջության մասին, չինական իշխանությունները կարողացան ոչ միայն արագորեն բացահայտել թագավարակի հավանական կրողներին, այլև հետևել նրանց տեղաշարժին և նույնականացնել այն անձանց, որոնք շփվել են նրանց հետ: Ավելին, օգտագործելով բջջային հավելվածներ, որոնք զգուշացնում են քաղաքացիներին վարակակիրների մերձավորության մասին, նրանք կարողացան սահմանափակել նաև վարակի տարածման հնարավորությունը: Եվ քանի որ Չինաստանը կարողացավ կարճ ժամանակահատվածում հաղթահարել թագավարակի մարտահրավերը՝ հենց այդ սահմանափակումների շնորհիվ, ամենաժողովրդավար երկրներում անգամ այսօր հնչում են ելույթներ Չինաստանի օրինակին հետևելու անհրաժեշտության վերաբերյալ, ավելին, ընդունվում են նաև ազատություններն ու իրավունքները սահմանափակող նմանատիպ որոշումներ: Նման տեխնոլոգիաներ օգտագործելու որոշում է կայացրել նաև Իսրայելը: Վարչապետ Բ. Նաթանյահուն վերջերս լիազորել է Իսրայելի անվտանգության գործակալությանը ընդարձակել վարակակիրներին հետևելու դիտարկման ծրագիրը, օգտագործելով այն տեխնոլոգիաները, որոնք, սովորաբար, նախատեսված են ահաբեկչության դեմ: Ընդ որում, երբ խորհրդարանական համապատասխան ենթահանձնաժողովը, հաշվի առնելով դրա հնարավոր հետևանքները մարդու ազատությունների և իրավունքների տեսանկյունից, հրաժարվեց հաստատել դա, Նաթանյահուն դա հաստատեց որպես «արտակարգ հրամանագիր»[8]: Նմանատիպ որոշում՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մա-

[7] Юваль Ной Харари, Мир после коронавируса, http://konkir.ru/articles/obshchestvo/yuval-noy-harari-mir-posle-koronavirusa

[8] Նույն տեղում:

սին» օրենքում լրացում կատարելու մասին», ապրիլի 1-ին ստորագրեց նաև ՀՀ նախագահ Ա. Սարգսյանը: Համոզված եմ, որ այդ որոշման ընդունումը և «Արտակարգ դրության պայմաններում Սահմանադրությամբ ամրագրված մարդու հիմնարար ազատությունների և իրավունքների սահմանափակումն» ունեն ժամանակավոր բնույթ և բխում են «համաճարակի հետագա տարածումը սեղմ ժամկետներում կանխարգելելու և մարդկային բազմաթիվ կյանքեր փրկելու» անհրաժեշտությունից: Սակայն, սոցիոլոգիայում հաստատված տեսակետ կա այն մասին, որ յուրաքանչյուր ընդունված որոշում, հետագայում՝ հետ կանչելուց հետո, անպայմանորեն, իր ներկայությունը մասամբ պահպանում է… Արտակարգ իրավիճակում իրականացվող բազմաթիվ միջոցառումներ հետագայում դառնալու են մեր կյանքի մի մասը: Այդպիսին է արտակարգ իրավիճակների բնույթը: Այն որոշումները, որոնք ընդունելու համար սովորական ժամանակներում տարիների քրտնաջան աշխատանք էր պահանջվում, այսօր ընդունվում են ակնթարթորեն:

Եթե նախկինում կառավարությունը ցանկանում էր իմանալ, թե ձեր մատը սմարթֆոնի էկրանին ինչ հղումի վրա է կանգնում, ինչ է որոնում, ապա հիմա, կապված համավարակի հետ, կառավարությունն ուզում է իմանալ ձեր մատի ջերմությունը և ձեր արյան ճնշումը: Բայց ամբողջ խնդիրը նրանում է, որ եթե կարող են հետևել ձեր մարմնի ջերմությանը, զարկերակային ճնշմանը և սրտի կծկումների հաճախականությանը, կարող են բացահայտել նաև, թե ձեզ ինչն է ուրախություն կամ տառապանք պատճառում կամ հունից հանում, նշանակում է՝ կարող են նաև ազդել այդ ամենի վրա:

Սա լուրջ և մտահոգության տեղիք տվող խնդիր է:

Գրեթե առանց բացառության, բոլոր երկրներում հայտարարված է արտակարգ դրություն, արգելված է մարդկանց տեղաշարժն առանց հատուկ թույլտվության, արգելված է տնից դուրս գալը, օրվա կարգախոսն է դարձել՝ «Մնա՛ տանը», արգելված են հարսանիքները, հուղարկավորություններին թույլատրելի է համարվում միայն հարազատների սահմանափակ ներկայությունը, արգելվում են մարդկանց հետ շփվելը, երեխաներին շոյելն ու գրկելը, էլ չեմ ասում՝ համբուրելը, սահմանված են, այսպես կոչված, «սոցիալական տարածություններ», որոնք անհրաժեշտ է պահպանել խանութներում, ընկերոջ կամ բարեկամի հանդիպելիս…. Գուցե և այդ ամենն իսկապես անհրաժեշտ է համավարակի տարածումը կանխելու համար: Սակայն, չպետք է մոռանալ, որ մարդը հասարակական-քաղաքական կենդանի է, ինչպես նրան բնութագրում էր Արիստոտելը և, որ «միայնակ ապրել կարողանալու համար մարդը պետք է լինի կա՛մ բարոյապես թերզարգացած, կա՛մ գերմարդ…»[9], կամ, ինչպես Ֆ. Նիցշեն էր ընթերցում այն՝ «պետք է լինել կա՛մ անասուն, կա՛մ աստված…»[10]:

Մարդն ապրում է սոցիալական հաղորդակցության և շփումների շնորհիվ, այդ ամենի արդյունքում ձևավորվող դրական և բացասական էներգիայի միջոցով է պահպանում իր ֆիզիկական և, հատկապես, հոգեկան առողջությունը… Հոգեվերլուծության մեջ ֆիզիկայից վերցված մի հասկացություն կա՝ սուբլիմացիայի տեսություն՝ համաձայն որի էներգիայի մի տեսակը փոխարկվում է էներգիայի մեկ այլ տեսակի: Մեր հոգևոր էներգիան ֆիզիկական նմանատիպ հաղորդակցությունների, շփումների, գրկախառնման, տառապողի կամ ուրախացողի կողքին լինելու արդյունքում ձևավորվող էներգիայի սուբլիմացիան է: Արգելեցե՛ք առաջինները, և կվերանա նաև երկրորդը…

Ճի՛շտ է, համավարակները չունեն ազգային բնույթ, համենայն դեպս, մինչև այն պահը, քանի դեռ գիտությունը, որ ծա-

[9] https://www.azatutyun.am/a/30521398.html
[10] Аристотель, https://citaty.info/man/aristotel?sort_by=rating&page=11
[11] Ф. Ницше, Сумерки идолов, или как философствуют молотом, http://nietzsche.ru/works/main-works/idols/

գումով հրեա գերմանացի քիմիկոս Ֆրից Հաբերից հետո առնվազն «կորցրել է իր անմեղությունը», չբացահայտի մարդկային գենի ազգային կամ ռասայական հիմքերը: Փոխարենը, համավարակների դեմ պայքարում միանգամայն կարևոր է ազգային հոգևոր-բարոյական առանձնահատկությունների դերը: Չինաստանը կարողացավ արդյունավետ ձևով իրականացնել այն՝ շնորհիվ չինացիների օրինապաշտության, կազմակերպածության, պետական շահի գերակայության գիտակցության: Նրանցից յուրաքանչյուրն իշխանությունների հրահանգներն ու որոշումները կատարում էր զինվորի նման՝ ժամանակին և հստակ, ըստ կանոնակարգի: Կարգապահությունը և օրենքներին հետևելը յուրաքանչյուր չինացու արյան մեջ է, դա նրա ավանդույթի հետ է կապված, դա նրա անհրաժեշտությունն է: Մեր դեպքում՝ խնդիրն այլ է: Մեր մտածողությունն արևմտյան ավանդույթների վրա է կառուցված, մենք անհատապաշտ ենք, մեզ համար կարևորը ոչ թե պետությունն է, այլ մարդկային Ես-ը, ոչ թե Օրենքներն են, Կարգապահությունը, այլ Ազատությունը: Հայի համար ազատությունը կյանքից ավելի թանկ է: Ազատությունը մեր անհրաժեշտությունն է, դրանով է պայմանավորված, որ մենք այն մահվան հետ դրել ենք կշեռքի մյուս նժարին՝ «Ազատություն կամ մահ»: Նրա համար այլ լուծում չկա. «Չի սիրում ոչ ստրկություն, ոչ երջանկություն, գերադասում է տառապանք և ազատություն»: Նրա «չափը» «չափազանցն է…»: Որպես եսապաշտ՝ այսպես է նրան բնութագրում Դ. Դեմիրճյանը. «Անկարգ է և անիշխանական թե՛ հասարակության, թե՛ պետության և թե՛ գաղափարների մեջ: Իբրև ժողովրդական՝ անմիաբան է, անտանելի, խռովարար»:[12] Եթե այս տեսանկյունից նայենք, ապա համավարակի դեմ մղվող պայքարում լուրջ խնդիրներ ենք ունենալու, որի վկայությունը վարակվածության համեմատական մեծ թիվն է: Դա մեր անկազմակերպվածության, անօրինականության, երևույթներին «մատների արանքով նայելու» հոգեբանության արդյունքն է … Եվ այս հարցում միակ մխիթարությունը դարձյալ մեր հոգևոր-բարոյական առանձնահատկությունների մեջ է. անհրաժեշտության պահին բռունցքվել կարողանալ, ազգային ու պետական շահը բարձրագույն նպատակ դարձնել, պետության և իշխանությունների կողքին կանգնել՝ անկախ նրանց հանդեպ ունեցած մեր վերաբերմունքից…

Նման աղետներն ու համաճարակներն անհետևանք չեն անցնում, դրանք խորապես ազդում են ոչ միայն այն ապրած սերունդների, այլև եկողների հոգեբանության վրա՝ մշակելով համապատասխան վարք և կենսակերպ… Ցեղասպանություն ապրած մեր ամենապայծառ մտածողներից մեկը՝ հոգեբան և փիլիսոփա Հակոբ Պողոսյանը, բացառիկ արժեքավոր՝ «Հայ հոգեբանության ներածություն» աշխատության մեջ, անդրադառնալով այս խնդրին, գրում է. «Ինձի կը թուի, սակայն, թէ այս ջարդերը եւ անոնց սոսկալի տպաւորութիւնները մինչեւ մեր ուղն ու ծուծը ներգործած են… Որչափ որ ես գիտեմ, տակաւին չունինք ասանկ կանոնաւոր եւ գիտական հիմերու վրա դրուած հետազոտութիւններ, որոնց լոյսին տակ կարենանք ըսել, թէ ամեն մէկ ջարդէ վերջ քանի՞ մանուկներ մարմնապէս թերի, հրէշակերպ, լուսնոտ, խելագար, տկարամիտ, ջղագար, փոքրագլուխ եւ խենթ ծնած են: Դարձեալ, ջարդերու ազդեցութիւնները ինչպիսի ցեղ մը յառաջ բերած են»[13]:

Պողոսյանը համոզված էր նաև, որ «ջարդի զաւակների» թիվը մի քանի անգամ ավելի մեծ է «ջարդերու ատեն ինկածներու» համեմատությամբ, որովհետև, «սերունդ մը եթէ նոյն իսկ զերծ մնայ իր նախահայրերուն կրած տանջանքներէն, անիկա տակաւին մեծապէս պիտի ազդուի իր ծնողքներէն լսած ջարդերու պատմութիւններէն… Այս իրողութիւնները իբր վէպ, պատմութիւն, դասագիրք, երգ կարդալով ու երգելով պիտի ազդուի պզտիկը, եւ ասոնք ահագին սոսկում եւ յոռի տպաւո-

[12] Դերենիկ Դեմիրճյան, Հայը, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 14:
[13] Պողոսեան Յ.Պ., Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրէ, 1958, էջ 133–134:

րութիւն պիտի ձգեն անոր ընկալուչ (pastic) մտքին վրայ: Ասոնք պիտի փոխեն մանկան մտքի ուղղութիւնը (mental attitude), պիտի գրգռեն իր երեւակայութիւնը, երազներու մէջ պիտի արտայայտուին: Այս սոսկումները, գրգռումները եւ վախերը մանկան մտքին ու յիշողութեան մէջ պիտի խճողուին, եւ յառաջ բերեն տրամաբանութեան ու մտայնութեան տկարութիւն»[14]: Թերևս, դրանով էր պայմանավորված նաև այն, որ, «ջերմապէս» հավատացած լինելով, որ այդ ամենի մասին «պէտք է գրուի, խօսուի ու քարոզուի», միաժամանակ նաև պահանջում էր, որ դա արվի միայն այնպիսի «կարող ու ձեռնհաս անձնաւորութիւններու կողմէ, որոնք գիտէն ինչ գրել ու խօսիլ, երբ գրել ու խօսիլ, եւ ինչպէս գրել ու խօսիլ...»[15]:

Այս ամենը վերաբերում է նաև համավարակին: Կասկածից վեր է, որ այն հաղթահարելու համար անհրաժեշտ են կտրուկ միջոցառումներ, հասկանալի է նաև, որ այդ միջոցառումները կարող են չհամապատասխանել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության միջազգային կոնվենցիայի սկզբունքներին, որովհետև համավարակը չի սպասում... Այնուամենայնիվ, հարկավոր է այդ ամենը կիրառել այնպես, որ համավարակը բուժելու համար նախատեսված այսօրվա հիվանդանոցներն ու մեկուսացման վայրերը վաղը չտրամադրվեն հոգեկան խանգարումներով տառապողներին...

Բնածին կամ մարդածին աղետներից հետո՝ լինեն դրանք երկրաշարժ, փոթորիկ, ահաբեկչություն, վթար և այլն, աղետի ենթարկված և աղետը վերապրած բնակչության հետ աշխատում են հոգեբաններ, բժիշկներ, և դա միանգամայն բնական է, որովհետև նման իրադարձություններից հետո մեծ է հոգեկան վնասվածքների, ցնցումների և խանգարումների հավանականությունը: Դրա անհրաժեշտությունն առավել մեծ է համավարակների և համաճարակների դեպքում, թեև իր ընդգրկվածության պատճառով դա գործնականում գրեթե անհնար է իրագործել... Իսկ դա նշանակում է, որ աղետից հետո մենք մնալու ենք ինքներս մեզ հետ, առանց կողմնակի աջակցության և միմյանց հանդեպ մեր կարեկցանքով, հանդուրժողությամբ, ներողամտությամբ, սիրով ու քնքշությամբ ենք «մեջքներս ուղղելու»...

«Չկա որևէ մեկը, որն իր ներսում չունի անհանգստություն, տագնապ, աններդաշնակություն, վախ՝ ինչ-որ անհայտ բանի հանդեպ կամ ինչ-որ բանի հանդեպ, որի մասին նույնիսկ չի հանդգնում մտածել կամ ինքն իր հանդեպ... Այսօր հիվանդ է ամբողջ աշխարհը, ամբողջ կյանքն է հիվանդ... Եթե ես բժիշկ լինեի և ինձ հարցնեին, թե ինչ խորհուրդ եմ տալիս, կպատասխանեի. արարի՛ր լռությունը: Պարտադրի՛ր մարդկանց լռել: Հակառակ դեպքում՝ հնարավոր չէ լսել Աստծո ձայնը...»[16]:

[14] Պողոսեան Յ.Պ., Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրէ, 1958, էջ 134–135:
[15] Նույն տեղում, էջ 140:
[16] Сёрен Кьеркегор, Понятие страха - Простое, психологически намеченное размышление в направлении догматической проблемы первородного греха - Написано Вигилием Хауфниенсием – Содержание, Пер. с дат. Н.В. Исаевой, С.А. Исаева. 2-е изд. М.: Академический про-ект, 2014. 224 с.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դերենիկ Դեմիրճյան, Հայը, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 14:
2. Պողոսեան Յ.Պ., Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրէ, 1958:
3. Ադոնց Ն.Շ., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում : Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի: Ռուս. թարգմ.՝ Ա.Թ. Խոնդակարյան, Է.Հ. Խոնդակարյան, Ե., 1987:
4. Аристотель, https://citaty.info/man/aristotel?sort_by=rating&page=11
5. Даниэл М., Тайные тропы носителей смерти. Пер. с чеш./Под ред. Б. Л. Черкасского. М., Прогресс, 1990. 416 с., http://www.sivatherium.narod.ru/library/Daniel/glava_02.htm
6. Для чего средневековому чумному доктору были нужны маска, плащ и птичий клюв, https://medportal.ru/budzdorova/winner/vrach-vo-vremya-chumy/Врач
7. Чума: как "черная смерть" истребила сотни миллионов людей, https://24tv.ua/health/ru/chuma_kak_chernaja_smert_istrebila_sotni_millionov_ljudej_n1252393
8. Сёрен Кьеркегор, Понятие страха - Простое, психологически намеченное размышление в направлении догматической проблемы первородного греха. Написано Вигилием Хауфниенсием – Содержание, Пер. с дат. Н.В. Исаевой, С.А. Исаева. 2-е изд. М., Академический про-ект, 2014, 224 с.
9. Ф. Ницше, Сумерки идолов, или как философствуют молотом, http://nietzsche.ru/works/main-works/idols/
10. Юваль Ной Харари для FT, Мир после коронавируса, https://mnenia.zahav.ru/Articles/14106/yval_noi_harari_mir_posle_coronavirusa
11. Юваль Ной Харари, Мир после коронавируса, http://konkir.ru/articles/obshchestvo/yuval-noy-harari-mir-posle-koronavirusa
12. https://www.azatutyun.am/a/30521398.html

Юрий ОВАКАНЯН
И.о. зав. кафедрой философии и армянской истории, АГЭУ, к.ф.н., доцент

РОЛЬ НАЦИОНАЛЬНЫХ ДУХОВНО-НРАВСТВЕННЫХ ОСОБЕННОСТЕЙ В БОРЬБЕ ПРОТИВ ПАНДЕМИИ КОРОНАВИРУСА

Статья посвящена особенностям проявлений пандемии коронавируса. По мнению автора, пока наука не обнаружила национальных или расовых корней человеческого гена, пандемии не могут иметь национальной сущности, тем не менее, в борьбе против него чрезвычайно важную роль играют духовно-нравственные особенности нации. Это подтверждает пример Китая, и отнюдь не случайно, что современные демократические страны Запада, которые критиковали Китай за тоталитаризм, сегодня следуют методам его борьбы против пандемии. В статье раскрывается идея того, что хотя мышление армянского народа основано на принципах западных традиций, индивидуализма, либерализма и демократии, и как эгоист он беспорядочен, анархичен в отношении и общества, и государства, и идей, тем не менее, автор убежден, что в случае необходимости армянский народ способен объединиться, возвышая национальные и государственные интересы над собственными, сплотиться вокруг национального интереса, вокруг государства и правительства, не зависимо от своего личного отношения к ним, и преодолеть пандемию с помощью своей дисциплинированности.

Ключевые слова: *коронавирус, пандемия, эпидемия, особенности нации, духовно-нравственная, врожденная и антропогенная катастрофа, «черная смерть», «испанский грипп», инфекция*

Yuri Hovakanyan
Acting Head of the Chair of Philosophy
and Armenian History, ASUE,
PhD in Philosophy, Associate Professor

THE ROLE OF THE NATIONAL SPIRITUAL AND MORAL SPECIFICATIONS IN THE THE FIGHT AGAINST A PANDEMIC

The article is about the specifications of the emergence of Coronavirus pandemic. The author believes that although pandemics do not have national characteristics, as long as science has not discovered national or racial bases of human genes yet, the role of the national spiritual and moral specifications is definitely crucial in the fight against a pandemic. The example of China proofs this, and It is not a coincidence that modern western democratic republics, which criticized China for totalitarianism, today follow China's methods of fight against the Coronavirus pandemic.

This article develops the idea that although Armenians' way of thinking is formed of western principles of traditions, individualism, liberalism, and democracy as a selfish nation, Armenians are disordered and anachronistic in society as well as in state and in ideas. However, the author is sure that in the time of need we, Armenians, are capable of raising the fist for pursuing national and state interests, standing up to the authorities and state regardless of our attitude toward them and overcoming the pandemic with our discipline.

Keywords: *coronavirus, pandemic, epidemic, national segregation, spiritual-moral, innate and anthropogenic catastrophe, "Black death", "Spanish flu", infection*